ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2022/05

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երքաղլույս» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Էլջեն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Երքաղլույս» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Մինասյանի, Ա. Անանյանի,

«Էլջեն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ս. Շահբազյանի, Ա. Ալոյանի, Հ. Օհանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթ, լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Էլջեն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 17.01.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 17.01.2022թ.-ին:

17.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/05 համարի ծածկագիրը:

26.01.2022թ.-ին, 03.02.2022թ.-ին և 11.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2022թ.-ին:

2. **<u>«Էլջեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Էլջեն» ՍՊԸ-ն 17.01.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«08.12.20212.-ին «Երքաղլույս» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) հայտարարել է թիվ ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի գնման առարկան է լուսատեխնիկական ապրանքներ, որոնք խմբավորված են 3 չափաբաժիններում (այսուհետ՝ Գնման առարկաներ): Գնման առարկաների տեխնիկական բնութգրերը խտրական են և սահմանափակում են մասնակիցների մասնակցությունը Մրցույթին, քանի որ տեխնիկական բնութագրերում սահմանված ձևական պահանջների պատճառով հնարավոր չէ Մրցույթին առաջարկել ավելի լավ և էներգախնայող հատկանիշներով օժտված լուսատեխնիկական ապրանքներ: Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերից տպավորությունն այնպիսին է, որ միլիմետրերով սահմանված Գնման առարկաների արտաքին չափերը ավելի կարևոր են քան լուսատուի բուն ֆունկցիոնալ հատկանիշները, այն է ֆոտոմետրիկ և էլեկտրական պարամետրերը, ընդ որում այդ չափերից որոշը հիմնավորված չեն, օրինակ՝ լուսատուների մատրիցայի չափը, մոնտաժային անցքի տրամաչափը, «լուսատու լեդ 50»-ի մոնտաժման հատվածի հաստությունը, լուսադիոդների և ոսպնյակների քանակը: Բացի այդ, հրավերում նշված է, որ լուսատուները անցնելու են «Երքաղլույս» ՓԲԸ-ում լուսատեխնիկական

լաբորատորիայի հետազոտություն՝ ստուգվելու են բոլոր պարամետրերը (հզորություն, կելվին, լյումեն, և այլն) որոնք պետք է համապատասխանեն տեխնիկական բնութագրերին, սակայն հրավերում նշված չէ թե ինչ մեթոդով են այդ ստուգումները անցկացվելու, հարկ է նշել, որ դրսի լեդ լուսավորության ստուգման միջազգայնորեն ընդունված մեթոդներից մեկը դա LM-79 թեստ մեթոդն է: Արդյունքում այս ամենը առաջացնելու է անբարեդիզ մրցակցություն և սահմանափակվելու է մասնակիցների ու մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների քանակը, որի հետևանքով առաջարկվելու են ավելի վատ որակի լույսեր քան կառաջարկվեին, եթե Գնման առարկաների տեխնիկական բնութագրերը սահմանվեին հարկ եղած ձևով:

Վերոգրյալի հետևանքով «Էլջեն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) զրկվել է իր ապրանքները առաջարկելու հնարավորությունից, Ընդ որում այդ ապրանքներից որոշները ավելի էներգախնայող են քան հրավերով սահմանվածը:

1) 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է համապատասխանաբար, որ «լուսատու լեդ 50»-ի հզորությունը պետք է լինի 50 Վատտ(±5%) իսկ լուսատվությունը ոչ պակաս 4500 լյումենից, «լուսատու լեդ 100»-ի հզորությունը պետք է լինի 100 Վատտ(±5%) իսկ լուսատվությունը ոչ պակաս 8300 լյումենից, «լուսատու լեդ 150»-ի հզորությունը պետք է լինի 150 Վատտ(±5%) իսկ լուսատվությունը ոչ պակաս 12300 լյումենից:

2) 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է, որ լուսատուները պետք է բաղկացած լինեն մեկ մատրիցայից, որոնք հավաքված են համապատասխանաբար՝ «լուսատու լեդ 50»-ը 70 հատ լուսադիոդից, «լուսատու լեդ 100»-ը 120 հատ լուսադիոդից, իսկ «լուսատու լեդ 150»-ը 180 հատ լուսադիոդից:

3) 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է լուսատուի և իրանի չափը, և մատրիցայի չափը:

4) 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է, որ մոնտաժային անցքի տրամաչափը պետք է լինի 44-50մմ իսկ մոնտաժման հատվածը կլոր: 01.11.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված պարզաբանմամբ Պատվիրատուն նշել է, որ լուսատուների մոնտաժումը իրականացվելու մինչև 44 մմ հաստությամբ խողովակների վրա:

5) 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է, որ մոնտաժման հատվածի պատի հաստությունը պետք է լինի առնվազն 7մմ: 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է, որ մոնտաժման հատվածի պատի հաստությունը

պետք է լինի առնվազն 3մմ: Մինչդեռ 1-ին չափաբաժնում նշված լուսապուի քաշը ավելի թեթև է քան 2-րդ և 3-րդ չափաբաժիններում նշված լուսապուներինը:

6) Հրավերում նշված է, որ լուսապուները անցնելու են «Երքաղլույս» ՓԲԸ-ում լուսատեխնիկական լաբորատորիայի հետազոտություն՝ ստուգվելու են բոլոր պարամետրերը (հզորություն, կելվին, լյումեն, և այլն) որոնք պետք է համապատասխանեն տեխնիկական բնութագրերին, սակայն հրավերում նշված չէ թե ինչ մեթոդով են այդ ստուգումները անցկացվելու: Բացի այդ, տեխնիկական բնութագրում նշված ՀՀ կառավարության 2005թ.-ի փետրվարի 3-ի թիվ 150-Ն որոշումը, որին ըստ հրավերի պետք է համապատասխանեն ձեռքբերման ենթակա լուսապուները, ուժը կորցրել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի համաձայն.

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:»:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերի համաձայն.

«2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վերոգրյալից հետևում է, որ գնման գործընթացի նպատակն է համարժեք հատուցմամբ ձեռքբերել պատվիրատուի պահանջմունքներին համապատասխանող ապարանք, այն է՝ ապրանք, որը իր որակական և տեխնիկական հատկանիշներով պիտանի է ծառայեցնելու պատվիրատուի լիազորությունների սահմաններում իրականացվող գործողություններին: Ընդ որում Պատվիրատուն պետք է ընդլայնի մասնակիցների շրջանակը, իսկ գնման գործընթացը կազմակերպելիս պատվիրատուի կազմած գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, պետք է լինի օբյեկտիվորեն հիմնավորված, ոչ խտրական, բավարարի առնվազն երկու հնարավոր մասնակիցների և արտադրողների կողմից առաջարկվող ապրանքներին, և չառաջացնի չհիմնավորված խոչընդոտներ գնման գործընթացում:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում Պատվիրատուն սահմանել է մի շարք հատկանիշներ որոնք անհիմն սահմանափակում են մասնակիցների, մասնավորապես Ընկերության մասնակցությունը Մրցույթին: Այդ սահմանափակումներից է տեխնիկական բնութագրում նշված «Վատտ»-ի նվազագույն սահմանաչափը, լուսատուի լուսադիոդների քանակը, լուսատուի մատրիցայի չափերը, 1-ին չափաբաժնում մունտաժային անցքի տրամաչափը և մոնտաժային հատվածի պատի հաստությունը: Մասնավորապես՝

- «Վատտ»-ի նվազագույն սահմանաչափը Ընկերության մասնակցությունը Մրցույթին սահմանափակում է, քանի որ այդ սահմանափակումով Ընկերությունը զրկվել է ավելի բարձր էներգախնայողություն ունեցող, այսինքն՝ ավելի ցածր «Վատտ»-ով բայց նույն կամ ավելի բարձր լուսատվությամբ լուսատուներ Մրցույթին առաջարկելու հնարավորությունից: Օրինակ՝ Ընկերությունը կարող է առաջարկել 30 Վատտ հզորությամբ լուսատու որն ունի 4500 լյումեն և 100 Վատտ հզորությամբ լուսատու որն ունի 15000 լյումեն, այսինքն՝ այդ լուիսատուները ծախսելով հրավերի 1-ին և 3-րդ չափաբաժիններով սահմանված

լուսապտուներից ավելի քիչ էներգիա տալիս են նույնքան կամ ավելի շատ լյումեն լույս որքան սահմանված է այդ նույն չափաբաժիններով:

- Լուսապտուի լուսադիոդների քանակը Ընկերության մասնակցությունը Մրցույթին սահմանափակում է, քանի որ Ընկերության որոշ լուսապտուների լուսադիոդների քանակը ավելի քիչ է քան սահմանված է հրավերով, սակայն այդ լուսապտուների լուսատվությունը (լյումենը) համապատասխանում է հրավերով սահմանված լուսատվության չափանիշներին:

- Մատրիցայի չափը նշելու պատճառով Ընկերության մասնակցությունը Մրցույթին նույնպես անհիմն սահմանափակվում է, քանի որ իրանի չափը նշելով Պատվիրատուն արդեն իսկ սահմանել է լուսապտուի իր համար ցանկալի կամ ընդունելի չափերը, հետևաբար մատրիցայի չափը նշելով Պատվիրատուն անուղղակիորեն սահմանափակում է տվյալ մրցույթին Ընկերության մասնակցությունը, քանի որ Ընկերության լուսապտուների մատրիցայի չափերը չնչին բայց տարբերվում են հրավերով սահմանվածից, մինչդեռ այդ նույն լուսապտուների իրանի չափերը համապատասխանում են հրավերով սահմանվածին և կարող են ապահովել հրավերով սահմանված լուսատվությունը:

- 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է, որ մոնտաժային անցքի տրամաչափը պետք է լինի 44-50մմ իսկ մոնտաժման հատվածը կլոր: 01.11.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված պարզաբանմամբ Պատվիրատուն նշել է, որ լուսապտուների մոնտաժումն իրականացվելու է մինչև 44 մմ հաստությամբ խողովակների վրա: Այսինքն, ստացվում է, որ Պատվիրատուն լուսապտուի մոնտաժային անցքի 44 մմ նվազագույն շեմը սահմանել է սխալ, քանի որ ըստ պարզաբանման խողովակը որին պետք է մոնտաժվի լուսապտուն հնարավոր է լինի հենց 44 մմ, հետևաբար եթե Պատվիրատուին մատակարարվի 44մմ մոնտաժային անցքով լուսապտու ապա վերջինս չի կարողանալու դրանք մոնտաժել 44մմ-ոց խողովակներին: Բացի այդ, 44մմ-ից փոքր խողովակները սովորաբար լինում են 40մմ հաստությամբ: Ընկերությունը Մրցույթի շրջանակներում 1-ին չափաբաժնի համար կարող է առաջարկել լուսապտու, որի հատկանիշները համապատասխանում են հրավերով սահմանվածին բացի մոնտաժային անցքի տրամաչափից, մասնավորապես՝ Ընկերության առաջարկած լուսապտուի մոնտաժային հատվածի տրամաչափը 42.7 մմ, որը նույնպես կարող է մոնտաժվել 40մմ խողովակին, այսինքն՝ 42.7 մմ մոնտաժային հատվածի տրամաչափը պետք է բավարարի Պատվիրատուի պահանջներին: Հետևաբար մոնտաժային անցքի համար 44մմ նվազագույն տրամաչափ սահմանելը անհիմն սահմանափակում է Ընկերության մասնակցությունը Մրցույթին:

- 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է, որ մոնտաժման հատվածի պատի հաստությունը պետք է լինի առնվազն 7մմ: Սակայն 1-ին չափաբաժնի համար նման նկարագիր սահմանելը դուրս է տրամաբանությունից, քանի որ 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է, որ մոնտաժման հատվածի պատի հաստությունը պետք է լինի առնվազն 3մմ: Մինչդեռ 1-ին չափաբաժնում նշված լուսատուի քաշը ավելի թեթև է քան 2-րդ և 3-րդ չափաբաժիններում նշված լուսատուներինը, այն պարզ պատճառով, որ 1-ին չափաբաժնով սահմանված լուսատուի հզորությունը ավելի քիչ է քան 2-րդ և 3-րդ չափաբաժիններով սահմանված լուսատուներինը:

Հրավերում նշված է, որ լուսատուները անցնելու են «Երքաղլույս» ՓԲԸ-ում լուսատեխնիկական լաբորատորիայի հետազոտություն՝ ստուգվելու են բոլոր պարամետրերը (հզորություն, կելվին, լյումեն, և այլն) որոնք պետք է համապատասխանեն տեխնիկական բնութագրերին, սակայն հրավերում նշված չէ թե ինչ մեթոդով են այդ ստուգումները անցկացվելու: Բացի այդ, տեխնիկական բնութագրում նշված ՀՀ կառավարության 2005թ.-ի փետրվարի 3-ի թիվ 150-Ն որոշումը, որին ըստ հրավերի պետք է համապատասխանեն ձեռքբերման ենթակա լուսատուները, ուժը կորցրել է: Նման պայմաններում պարզ չէ և անհասկանալի է թե Պատվիրատուն ինչպես պետք է պարզի իրեն հանձնված լուսատուների համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, քանի որ տարբեր միջավայրերում նույն լուսատուն տալիս է տարբեր ցուցանիշներ: Բացի այդ, դժվարանալու է նաև իրացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածով սահմանված իրավունքը, քանի որ փորձաքննության հստակ մեթոդ սահմանված չլինելու պայմաններում հնարավոր չէ որոշել լուսատուների աշխատանքային իրական հնարավորությունները, այն է համապատասխանում են արդյոք լուսատուները հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին թե ոչ:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք եզրահանգել, որ տեխնիկական բնութագրերը խտրական են և սահմանափակում են մասնակիցների, այդ թվում Ընկերության մասնակցությունը Մրցույթին, ավելին տեխնիկական բնութգրերում նշված որոշ հատկանիշների սահմանափակումներ, մասնավորապես՝ «վատտ»-ի նվազագույն շեմ սահմանելը ակնհայտորեն ձեռնտու չէ նաև պետությանը, քանի որ առանց այդ սահմանափակումների հնարավոր էր առաջարկել բարձր լուսատվությամբ ավելի տնտեսող լուսատուներ:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

«Էլջեն» ՍՊԸ-ն 31.01.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/05 գործն ըստ «Էլջեն» ՍՊԸ-ի բողոքի ընդդեմ «Երքաղլույս» ՓԲԸ-ի: Նշյալ բողոքի վերաբերյալ «Երքաղլույս» ՓԲԸ-ն ներկայացրել է առարկություններ և բողոքարկված գնման ընթացակարգին վերաբերվող փաստաթղթեր, որոնք ուսումնասիրելով ցանկանում ենք լրացնել սզբնապես ներկայացված բողոքը:

I. Պատվիրատուի գնման հայտում նշված են Գնման առարկաների ձեռքբերման առավելագույն գները, մինչդեռ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված գնումների պլանում այդ գները նշված չեն: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 18-րդ կետի բովանդակությունից բխում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով գնումը կազմակերպվելու դեպքում գնումների պլանում անհրաժեշտ է նշել գնման առարկայի միավորի գինը, քանի որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգի» (այսուհետ՝ Գնումների պլանի լրացման կարգ) 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ գնումների պլանում լրացվում է գնման առարկայի մեկ միավորի և ընդհանուր գները, իսկ Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման: Ուստի համադրելով Կարգի 18-րդ կետի և Գնումների պլանի լրացման կարգի 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի դրույթները կարող ենք փաստել, եթե գնման ընթացակարգը կզմակերպվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և առկա է գնման առարկայի նախահաշվային գին (մեկ միավորի առավելագույն գին), ապա գնումների պլանում նախահաշվային գինը նշելը պարտադիր է, քանի որ այդ պահանջը սահմանված է նորմատիվ իրավական ակտերով և իմպերատիվ է: Հետևաբար, եթե կազմակերպված գնման ընթացակարգում նշյալ պահանջը պահպանված չէ, ուրեմն

կարող ենք փաստել, որ տվյալ գնման ընթացակարգը կազմակերպվել է նշյալ նորմերի խախտմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի խախտմամբ, մասնավորապես՝ Կարգի 18-րդ կետի և Գնումների պլանի լրացման կարգի 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի խախտմաբ:

II. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից, ընդ որում հայտերի ներկայացման ժամկետը առնվազն քառասուն օրացուցային օր է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 327-րդ հոդվածի համաձայն՝ Ժամանակահատվածով որոշվող ժամկետը սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը: Նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն, ընդ որում Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Վերոգրյալ նորմերի համաձայն՝ մասնակիցները բաց մրցույթով գնման ընթացակարգին իրենց հայտերը կարող են ներկայացնել մրցույթը տեղեկագրում հրապարակելու օրվան հաջորդող օրվանից սկսած առնվազն 40 օրացույցային օրվա ընթացքում: Նշյալից հետևում է, որ մասնակցին հայտը ներկայացնելու համար պետք է տրվի առնվազն 40 ամբողջական օր, այսինքն՝ մասնակիցը 40-րդ օրացույցային օրը հայտը ներկայացնելու համար պետք է ունենա նույնպիսի ժամանակ, ինչպիսին ունեցել է օրինակ՝ մրցույթը հրապարակելու օրվան հաջորդող 20-րդ կամ 39-րդ օրացույցային օրը:

Ինչպես երևում է ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի հայտարարության և հրավերի բովանդակությունից, հայտերի ներկայացման վերջնաժամկետը նշանակվել էր Մրցույթի հայտարարությունը տեղեկագրում հրապարակելու օրվանից հաշված 40-րդ օրացույցային օրվա ժամը 11:00-ին: Ինչից կարող ենք փաստել, որ տվյալ գնման ընթացակարգը կազմակերպվել է վերոգրյալ նորմերի խախտմամբ, քանի որ ինչպես

պարզեցինք վերոգրյալով Մրցույթի հայտերը ներկայացնելու ժամկետը անհրաժաշտ էր սահմանել այնպես, որ մասնակիցները հայտը ներկայացնելու 40-րդ օրացույցային օրը ունենային այնպիսի ժամանակ, ինչպիսին ունեին օրինակ՝ մրցույթը հրապարակելու օրվան հաջորդող 20-րդ կամ 39-րդ օրացույցային օրը: ՈՒստի կարող ենք փաստել, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետը նշանակելով 40-րդ օրացույցային օրվա ժամը 11:00-ին Պատվիրատուն սահմանափակել է մասնակիցներին Օրենքով տրված՝ հայտը 40-րդ օրացույցայի ողջ օրվա ընթացքում ներկայացնելու իրավունքը:

III. ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերին կից պայմանագրի նախագծի 1.5. և 8.1.1 կետերի համաձայն՝

«1.5 Մատակարարումն իրականացվում է Գնորդի կողմից տրված ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, Գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Առաջին փուլի մատակարարման ժամկետը - օրացուցային օր է, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել կարճ ժամկետում: Հաջորդ փուլերում, մատակարարման ժամկետը՝ հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

8.1.1 Պայմանագրով նախատեսված չափաբաժինները և դրանցով սահմանված քանակները և ծավալները Պատվիրատուն կարող է ամբողջությամբ չպատվիրել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և այդ չպատվիրված մասով պայմանագիրը համարվելու է Կողմերի համար լուծված՝ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, բայց ոչ ուշ, քան 2023 թ.-ի հունվարի 31-ը»:

Նույն պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն) համաձայն՝ ենթակա են ձեռք բերման 17000 հատ լուսատու լեդ 50, 3000 հատ լուսատու լեդ 100 և 1000 հատ լուսատու լեդ 150, որոնց նախահաշվային ընդհանուր գինը գնման հայտի համաձայն կազմում է 462750000 (չորս հարյուր վաթսունեկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Ուսումնասիրելով պայմանագրի նախագծի 8.1.1 կետը առաջին հերթին ցանկանում ենք արձանագրել, որ այդ կետը հակասում է Կարգի 56-րդ կետի 9-րդ ենթակետին համաձայն որի՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Իսկ հակասում է այն պատճառով, որ պայմանագրի նախագծի 8.1.1

կետի բովանդակությունից հետևում է, որ Պատվիրատուն իրեն վերապահել է պայմանագիրը մասնակի չկատարելու իրավունք և չկատարված մասով ըստ պայմանագրի նախագծի այն համարվելու է լուծված: Փաստորեն նշյալից հետևում է, որ Պատվիրատուն հրավերով ի սկզբանե սահմանել է Կարգին հակասող դրույթ:

Բացի այդ, պայմանագրի նախագծի 1.5 և 8.1.1 կետերում մատակարարման պայմանները սահմանվել են այնպես, որ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 60 օրվա ընթացքում մատակարարը ստիպված է ողջ ապրանքը, որի նախահաշվային գինը 462.750.000 (չորս հարյուր վաթսունեկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ է, ներկրել Հայաստան և պահեստավորել, քանի որ 60 օր հետո Պատվիրատուն իր ցանկությամբ, ցանկացած պահի կարող է մատակարարից պահանջել ցանկացած քանակի ապրանք՝ 1 հատից մինչև պայմանագրով սահմանված ապրանքի ամբողջ քանակը: Իսկ մատակարարն էլ պարտավոր է լինելու Պատվիրատուի պատվիրված քանակին և տեսակին համապատասխան ապրանքը մատակարարել 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սակայն, եթե ուսումնասիրենք պայմանագրի նախագծի 8.1.1 կետը, ապա կտեսնենք, որ Պատվիրատուն պայմանագրով սահմանված ողջ քանակի ապրանքները կարող է և չպատվիրել, քանի որ նշյալ կետի համաձայն վերջինս իրեն իրավունք է վերապահել Պատվիրել այնքան, որքան ցանկանա, ընդ որում մատակարարի համար պարզ չէ թէ այդ պահանջը ինչպես է ձևավորվում, ուստի պայմանագրի կատարման փուլում հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, երբ մատակարարի կողմից (պայմանականորեն) 462.750.000 (չորս հարյուր վաթսունեկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի գնված և պահեստավորված ապրանքները կամ այդ ապրանքների զգալի մասը Պատվիրատուն չպատվիրի: Արդյունքում, Պատվիրատուի ցանկությունից կախված նույն մատակարարը կրելու է ահռելի ֆինանսական կորուստներ, քանի որ ծախսելով այդքան գումար հայտնվելու է անելանելի իրավիճակում: Ուստի նշյալից կարող ենք փաստել, որ պայմանագրի 1.5 և 8.1.1 կետերով սահմանված մատակարարման պայմանները անորոշ են և անկանխատեսելի, քանի որ այդ պայմաններից հնարավոր չէ հասկանալ թէ որքան ապրանք է իրականում Պատվիրատուն պատվիրելու և ըստ այդմ որքան ապրանք մատակարարը պետք է գնի և պահեստավորի, ինչը պայմանագրի կատարման փուլում ունի մեծ նշանակություն: Քանի որ, եթե մատակարարը գնի և պահեստավորի ապրանքների աբողջ քանակը և Պատվիրատուն այդ ապրանքները չպահանջի, ապա մատակարարը կրելու է ահռելի ֆինասական կորուստներ, որը վերջինիս կարող է տանել անգամ սնանկացման: Ձեռքբերման պայմանները այս կերպ անորոշ ձևով սահմանելը հակասում է

նաև Օրենիք 13-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն որի՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի ձեռքբերման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

IV. Ամփոփելով վերոգրյալը և համադրելով սկզբնապես ներկայացված բողոքի հետ ևս մեկ անգամ կարող ենք փաստել, որ թիվ ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգով սահմանված պայմանները խտրական են, սահմանափակում են և անհիմն բարդացնում են մասնակցությունը տվյալ գնման գործընթացին: Ուստի վերահաստատելով մեր պահանջը,

խնդրում ենք՝

- պարտավորեցնել ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:»:

«Էլջեն» ՍՊԸ-ն 10.02.2022թ.-ին ներկայացրած բողոքի մեկ այլ լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/05 գործն ըստ «Էլջեն» ՍՊԸ-ի բողոքն ընդդեմ «Երքաղլույս» ՓԲԸ-ի, որը լրացնելու նպատակով ներկայացնում ենք սույն ԲԲողոքի լրացումը:

Ընկերությունը բողոքում նշել է մրցույթի որոշ պայմաններ որոնք սահմանափակում են հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ Ընկերության մասնակցությունը մրցույթին: Լրացնելով գնման ընթացակարգում առկա մրցակցությունը և մեր մասնակցությունը սահմանափակող պայմանների շարքը, ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել հրավերով սահմանված հետևյալ պայմաններին՝

Հրավերով սահմանված է, որ «լուսատուի մոնտաժման հատվածը պետք է լինի կլոր խողովակի տեսքով», այս պայմանը սահմանափակում է ոչ կլոր մոնտաժման հատված ունեցող լուսատուներով մրցույթին մասնակցելու մեր և այլ ընկերությունների հնարավորությունը, օրինակ՝ այդ սահմանափակման պատճառով վեց անկյուն մոնտաժման հատված ունեցող լուսատուներով հնարավոր չէ մասնակցել տվյալ գնման ընթացակարգին: Մինչդեռ վեց անկյուն մունտաժման հատվածով լուսատուները ավելի հուսալի են ամրացվում, քան կլոր մոնտաժման հատվածով լուսատուները:

Հրավերով սահմանված է, որ իրանը պետք է լինի այլումինից ձուլված, այս պայմանը սահմանափակում է ոչ այլումինից ձուլված իրան ունեցող լուսատուներով մրցույթին մասնակցելու մեր և այլ ընկերությունների իրավունքը: Ընդ վորում ոչ այլումինից ձուլված

իրանով լուսապտուները կարող են լինել ավելի արդյունավետ, օրինակ՝ այլումինե թիթեղից պատրաստված լուսապտուները:

Հրավերով սահմանված է, որ լուսապտուի սնող լարումը պետք է լինի 220վ, + - 10 %, այս պայմանից հետևում է, որ հրավերով սահմանված լուսապտուները կարող են աշխատել 198 վ-ից մինչև 242 վ լարման միջակայքում, այսինքն եթե հոսանքի տատանումը լինի այնպիսին, որ լարումը իջնի մինչև 197 վ կամ բարձրանա 243 վ, ապա այդ լուսապտուները պետք է չաշխատեն կամ դուրս գան շարքից: Մինչդեռ շուկայում առկա են հոսանքի լարման ավելի մեծ՝ աշխատանքային միջակայք ունեցող լուսապտուներ, այսինքն շուկայում առկա են լուսապտուներ որոնք աշխատում են 198 վ-ից ցածր և 242 վ բարձր հոսանքի լարման ժամանակ, այլ կերպ ասած, այդ լուսապտուները հոսանքի տատանումներին ավելի դիմացկուն են և աշխատունակ: Արդյունքում, լուսապտուի 220վ, + - 10 % լարման միջակայք ունենալու հրավերով սահմանված պայմանի պատճառով, սահմանափակվել է 198վ - 242վ լարման միջակայքից ավելի մեծ միջակայք ունեցող լուսապտուներով մրցույթին մասնակցելու մեր և այլ ընկերությունների իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը ցանկանում ենք նշել, որ Պատվիրատուն բողոքին պատասխանելով՝ առանց հիմնավորելու այս կամ այն պայմանի անհրաժեշտությունը նշել է, որ լուսապտուների տեխնիկական բնութագրերը սահմանվել են ելնելով «Երքաղլույս» ՓԲԸ-ի աշխատանքային փորձից և անհրաժեշտությունից, այնինչ բողոքի պատասխանում նկարագրված չէ, ոչ աշխատանքային փորձը, ոչ էլ այն անհրաժեշտությունը, որից ելնելով սահմանվել են լուսապտուների նման տեխնիկական բնութագրերը: Մինչդեռ տեխնիկական բնութագրով սահմանված պայմանների անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականությունը կրում է Պատվիրատուն, քանի որ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի բովանդակությունից բխում է, որ գնման առարկայի բնութագիրը սահմանում է պատվիրատուն, որն Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ պետք է լինի օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Սակայն ինչպես պարզեցենինք Բողոքով, Պատվիրատուի կողմից սահմանված Գնման առարկաների տեխնիկական բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կազմակերպվել է տվյալ գնման գործընթացը: Քանի որ Պատվիրատուի կողմից սահմանված խստրական և սահմանափակ տեխնիկական բնութագրերի պատճառով ձեռք են բերվում ոչ այնքան տնտեսող, հոսանքի տատանումներին դիմացկուն և ոչ այնքան հուսալի ամրացվքող լամպեր, քան կարող էին ձեռք բերվել, եթե տեխնիկական

բնութագրերում բողոքում մատնանշված սահմանափակումները չնշվեին: Օրինակ՝ եթե այդ սահմանափակումները չնշվեին կամ նշվեին ելնելով իրական անհրաժեշտությունից, ապա հնարավոր կլիներ ձեռք բերել հրավերով սահմանվածից 40 ավելի տոկոս էներգախնայող, հոսանքի տատանումներին ավելի դիմացկուն և ավելի հուսալի ամրացվող լամպեր, որի արդյունքում նաև չէր սահմանափակվի մեր Ընկերության մասնակցությունը տվյալ գնման ընթացակարգին

Եզրափակելով բողոքը ևս մեկ անգամ կարող ենք փաստել, որ թիվ ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգով սահմանված պայմանները խտրական են ու անհիմն բարդացրել են և սահմանափակել են մեր Ընկերության մասնակցությունը տվյալ գնման գործընթացին: Ուստի վերահաստատելով մեր պահանջը,

խնդրում ենք՝

- պարտավորեցնել ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:»:

3. <u>«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.01.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/763-2022 գրությամբ դիմել է «Երքաղլույս» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էլջեն» ՍՊԸ-ի կողմից 17.01.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 19.01.2022թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Էլջեն» ՍՊԸ-ն /այսուհետ Բողոքաբեր/ իր բողոքում նշել է, որ հիշյալ ընթացակարգի իբրև իր մասնակցությունն սահմանափակվել է, քանի որ տեխնիկական բնութագրերում նշվել է, մասնավորապես.

- «Վատտ»-ի նվազագույն սահմանաչափը, որով Բողոքաբերը զրկվել է իրեն պատկանող ավելի բարձր էներգախնայողություն ունեցող, այսինքն ցածր «Վատտ»-ով բայց

նույն կամ ավելի բարձր լուսապվությամբ լուսապուներ Մրցույթին առաջարկելու հնարավորությունից,

- Լուսապուի լուսադիոդների քանակը, որով Բողոքաբերին պատկանող որոշ լուսապուների լուսադիոդների քանակը թեև ավելի քիչ է, քան սահմանված է Հրավերով, սակայն այդ լուսապուների լուսապվությունը համապատասխանում է Հրավերով սահմանված լուսապության չափանիշներին,

- Լուսապուի մատրիցայի չափերը, որով Բողոքաբերը զրկվել է իրեն պատկանող լուսապուների Մրցույթին առաջարկելու հնարավորությունից, քանի որ իրենց լուսապուների մատրիցայի չափերը թեև չնչին, սակայն տարբերվում են Հրավերով սահմանվածից, թեև լուսապուների իրանի չափերը համապատասխանում են Հրավերով սահմանվածին և նույն լուսապվությունն են ապահովում,

- 1-ին չափաբաժնում մոնտաժային անցքի տրամաչափը, որով Բողոքաբերը զրկվել է առաջարկել իրեն պատկանող լուսապու, որի հատկանիշները համապատասխանում են Հրավերի պահանջներին, բացի մոնտաժային անցքի տրամաչափից,

- 1-ին չափաբաժնում մոնտաժային հատվածի պատի հաստությունը, որով Բողոքաբերը տրամաբանությունից դուրս է դիտարկում, ելնելով այն հանգամանքից, որ 2-րդ և 3-րդ չափաբաժնով այդ պատի հաստությունն սահմանվել է առնվազն 3 մմ, մինչդեռ 1-ին չափաբաժնի այդ պատի հաստությունն սահմանվել է առնվազն 7 մմ, թեև քաշը համեմատաբար ավելի թեթև է, քան 2-րդ և 3-րդ չափաբաժնով սահմանված լուսապուներինը, որոնց քաշը համեմատաբար ավելի ծանր է, և որ հատկապես 1-ին չափաբաժնի լուսապուի հզորությունն ավելի քիչ է, քան 2-րդ և 3-րդ չափաբաժնով սահմանված լուսապուներինը,

- Լուսապուներն անցնելու են Պատվիրատուի լուսատեխնիկական լաբորատորիայի հետազոտությունը, որով Բողոքաբերին անհասկանալի են, թե ինչպես պետք է Պատվիրատուն լուսապուների համապատասխանությունն ստուգի, եթե փորձաքննության հստակ մեթոդ սահմանված չէ, իսկ Բողոքաբերը դժվարանալու է իրացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածով սահմանված իր իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը, Բողոքաբերը հանգել է եզրակացության, որ հիշյալ ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագրերը խտրական են և սահմանափակում են առհասարակ մասնակիցների, և մասնավորապես Բողոքաբերի հիշյալ ընթացակարգին մասնակցության իրավունքը, և որ «Վատտ»-ի նվազագույն սահմանաչափ սահմանելն ակնհայտորեն ձեռնտու չէ նաև պետությանը, քանի որ առանց այդպիսիք

սահմանափակումների, հնարավոր է առաջարկել բարձր լուսատվությամբ ավելի տնտեսող լուսատուներ:

Բողոքաբերի պահանջն ամբողջովին անհիմն է և ենթակա մերժման, այդ թվում՝ նաև տեխնիկական հետևյալ պատճառաբանությամբ՝

1. «Երքաղլույս» ՓԲԸ-ն իր կանոնադրական խնդիրների և նպատակային շահագործման համար առաջացած կարիքների բավարարման նպատակով, 2021թ-ի դեկտեմբերի 08-ին հայտարարել է ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերի բացման ժամկետ է սահմանվել 2022թ-ի հունվարի 17-ը, ժամը 11:00-ն, այսինքն ընթացակարգին հնարավոր մասնակիցների առավել լայն շրջանակ ապահովելու նպատակով՝ սահմանվել է 40 օրացուցային օր տևողությունը:

1.1 ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի գնման առարկա է հանդիսանում լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերումը, որոնք խմբավորվել են 3 չափաբաժնում:

1.2 Ելնելով «Երքաղլույս» ՓԲԸ-ի կարիքներից, սահմանվել են ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ձեռք բերվող լուսատեխնիկական ապրանքների տեխնիկական բնութագրերը: Ձեռք բերվող լուսատեխնիկական ապրանքների տեխնիկական բնութագրերն սահմանվել են ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան՝ սահմանելով գնման առարկա հանդիսացող լուսատուների նվազագույն չափորոշիչները, այլ ոչ թե սահմանափակվել է այդպիսիք:

2. Բողոքաբերի այն պնդումը, թե տեխնիկական բնութագրում «Վատտ»-ի նվազագույն սահմանաչափն անհիմն սահմանափակում է Ընկերության մասնակցությունը, քանի որ Ընկերությանը կարող է առաջարկել 30 Վատտ հզորությամբ լուսատու, որն ունի 4500 լյումեն և 100 Վատտ հզորությամբ լուսատու, որն ունի 15000 լյումեն, հիմնազուրկ է, ըստ որի

- 30 Վատտ հզորությամբ լուսատուն ունի այլ տեխնիկական բնութագրեր և չի կարող նույնականացվել 50 վատ հզորությամբ լուսատուի հետ, հետևաբար չի կարող համարվել որպես նույնանման գնման առարկա,

- նմանապես 100 Վատտ հզորությամբ լուսատուի տեխնիկական բնութագրերը տարբերվում են 150 Վատտ հզորությամբ լուսատուի տեխնիկական բնութագրերից, հետևաբար «Վատտ»-ի չափորոշիչներն սահմանվել են ավելի հստակեցնելու համար «Երքաղլույս » ՓԲԸ-ի կարիքների համար ձեռք բերվող գնման առարկայի նկարագիրը, ինչպես նաև

- նման տրամաբանությամբ Բողոքաբերը տարանջատել է նաև 30 Վատտ և 100 հզորությամբ լուսատուները՝ համարելով դրանք տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաներ:

3. Բողոքաբերի այն պնդումը, թե տեխնիկական բնութագրում լուսադիոդների քանակի սահմանված սահմանաչափն անհիմն սահմանափակում է Ընկերության մասնակցությունը, նույնպես հիմնազուրկ է, ըստ որի

- Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ 50 վտ լուսատուի մատրիցան պետք է հավաքված լինի առնվազն 70 հատ լուսադիոդից և ոսպնյակից,

100 վտ լուսատուի մատրիցան պետք է հավաքված լինի առնվազն 120 հատ լուսադիոդից և ոսպնյակից, իսկ

150 վտ լուսատուի մատրիցան պետք է հավաքված լինի առնվազն 180 հատ լուսադիոդից և ոսպնյակից, իսկ առնվազն նշանակում է դրանից ավել ցանկացած քանակ կբավարարի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:

- Բողոքաբերի այն պնդումը, թե իրենց լուսատուների լուսադիոդների քանակը ավելի քիչ է, քան սահմանված է հրավերով, ինչը և նշանակում է, որ լուսատուների տեխնիկական բնութագրով սահմանված նվազագույն չափորոշիչները հակասում են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դրույթներին, այն է՝ տեխնիկական բնութագրերին ներկայացվող պահանջներին:

- Լուսադիոդների նվազագույն քանակ սահմանվել է, ելնելով Երքաղլույս ՓԲԸ-ի աշխատանքային փորձից և անհրաժեշտությունից, քանի որ հնարավորինս շատ լուսադիոդների առկայության դեպքում, մեկ միավոր լուսադիոդի հզորությունն ավելի քիչ է լինում և եթե հետագա աշխատանքի ժամանակ լուսադիոդը խափանվում է, ապա լուսատուի պահանջվող լուսատվությունը շատ չի շեղվում պահանջվող լուսատվությունից:

4. Բողոքաբերի այն պնդումը, թե տեխնիկական բնութագրում մատրիցայի չափորոշիչներն անհիմն սահմանափակում է Ընկերության մասնակցությունը՝ նույնպես հիմնազուրկ է, ըստ որի

- Հրավերի տեխնիկական բնութագրով 50 վտ, 100 վտ և 150 վտ լուսատուների մատրիցաների համար սահմանվել են նվազագույն չափորոշիչներ և այս պարագայում ևս՝ Բողոքաբերի նշված այն հանգամանքը, թե իրենց լուսատուների մատրիցայի չափերը չնչին տարբերվում են հրավերով սահմանված չափորոշիչներից, չի նշանակում, որ լուսատուների տեխնիկական բնութագրով սահմանված նվազագույն չափորոշիչները հակասում են

գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դրույթներին, այն է՝ տեխնիկական բնութագրերին ներկայացվող պահանջներին:

5. Բողոքաբերի այն պնդումը, թե 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանված մոնտաժման անցքի տրամաչափի նվազագույն շեմն սահմանվել է սխալ՝ հիմնազուրկ է, ըստ որի

- Ինչպես նշվել է Բողոքաբերին ներկայացված պարզաբանման մեջ, լուսապտուները նախատեսվում է մոնտաժել մինչև 44 մմ տրամագծով խողովակների վրա, հետևաբար տեխնիկական բնութագրով սահմանվել է նաև համապատասխան չափորոշիչներ:

- Բողոքաբերի առաջարկած լուսապտուները, որոնց մոնտաժային անցքի տրամաչափը կազմում է 42.7 մմ չեն կարող մոնտաժվել ավելի մեծ տրամաչափ ունեցող խողովակաձև բարձակների վրա, իսկ լուսապտուների տեխնիկական բնութագրով սահմանված նվազագույն չափորոշիչները չեն հակասում գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դրույթներին, այն է՝ տեխնիկական բնութագրերին ներկայացվող պահանջներին:

6. Բողոքաբերի այն պնդումը, թե 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրով մոնտաժման հատվածի պատի հաստությունն սահմանվել է առնվազն 7 մմ, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժիններով՝ առնվազն 3 մմ, և որ սահմանված նկարագիրը դուրս է տրամաբանությունից՝ ևս հիմնազուրկ է, ըստ որի

- ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել տարբեր տեխնիկական բնութագրեր և հատկանիշներ ունեցող գնման առարկաներ: 1-ին չափաբաժնով նախատեսված լուսապտուների համար սահմանվել է համապատասխան չափորոշիչը, ելնելով՝ դրանց մոնտաժման ժամանակ մեխանիկական և տեխնիկական առանձնահատկություններից, հետագա շահագործման հուսալիությունից:

- Լուսապտուների տեխնիկական բնութագրերն սահմանվել են ելնելով՝ Երքաղլույս ՓԲԸ-ի աշխատանքային փորձից և անհրաժեշտությունից՝ Երքաղլույս ՓԲԸ-ի կարիքների բավարարման նպատակով, այն է՝

- Լուսապտուի մոնտաժման հատվածի/մոնտաժային անցքի 44-50 մմ մոնտաժման տրամագիծ ունեցող և մոնտաժման հատվածի պատի ավելի բարակ հաստություն ունեցող լուսապտուների մոնտաժման ժամանակ ի հայտ են եկել խնդիրներ, որոնք և հաշվի առնելով սահմանվել են առնվազն նշված չափորոշիչները, որոնք ևս չեն հակասում են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դրույթներին, այն է՝ տեխնիկական բնութագրերին ներկայացվող պահանջներին:

7. Բողոքաբերի այն դիտարկումը, որ պարզ չէ և անհասկանալի է, թե Պատվիրատուն ինչպես պետք է պարզի իրեն մատակարարված լուսատուի տեխնիկական բնութագրին համապատասխանությունը, հաշվի առնելով հրավերով նշված այն պայմանը, որ լուսատուներն անցնելու են «Երքաղլույս» ՓԲԸ-ի լուսատեխնիկական լաբորատորիայի հետազոտությունը՝ ստուգվելու են բոլոր բաղադրատարրերը/պարամետրերը (հզորություն, կելվին, լյումեն և այլն), որոնք պետք է համապատասխանեն տեխնիկական բնութագրերին, տեղեկացնում ենք, որ այս դրույթը վերաբերում է արդեն Գնման գործընթացի շրջանակում կնքված պայմանագրի կատարման հետագա գործառույթին, իրականացվելու է պայմանագիրը կնքելուց և լուսատուների փաստացի մատակարարումից հետո:

- «Երքաղլույս» ՓԲԸ-ի լուսատեխնիկական լաբորատորիայի համապատասխան սարքավորումը թույլ է տալիս ստուգել լուսատուների հզորության, կելվինի, լյումենի սահմանված չափորոշիչները, ինչպես նաև

- հետագայում հնարավոր է նաև տեխնիկական բնութագրերի համապատասխանությունն ստուգել անկախ փորձագիտական կազմակերպության կողմից իրականացվելիք փորձաքննության հիման վրա: Այս հանգամանքը ևս չի կարող դժվարացնել կամ խոչընդոտ հանդիսանալ:

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածով սահմանված դրույթների Բողոքաբերի կողմից իրացման դժվարությունների վերաբերյալ անհրաժեշտ է նշել նաև, որ հոդվածի 1-ին մասն բառացիորեն սահմանում է, այն է՝

1. Պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու իրավունք ունեն՝

1) պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք.

2) պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, և որ տարածական մեկնաբանությամբ նշանակում է, որ

** հանրային հսկողության օրենսդրությամբ սահմանված դրույթի իրականացման իրավունքն առաջանում է, մասնավորապես կնքված պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում,*

** այդպիսիք իրավունքը ձեռք են բերում՝*

- տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները,

- պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք, և որ

նշված հոդվածի 1-ին մասի կարգավորումները համադրելով միմյանց հետ՝ իրենց ամբողջության մեջ, կարելի է եզրակացնել, որ Բողոքաբերը չի կարող լինել հանրային հսկողության սուբյեկտ, քանի որ՝

1/ ընթացակարգին հայտ չի ներկայացրել՝ մասնակցության վերաբերյալ,

2/ ընթացակարգի արդյունքերով ներկայումս պայմանագիր չի կնքվել,

3/ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպություն և լրատվական գործունեություն իրականացնող անձ չէ:

8. Բողոքաբերի այն պնդումը, որ ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 22-րդ կետով սահմանված դրույթին համապատասխան, այն է՝

- Գնման առարկայի բնութագրերն սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ՝ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի, տեղեկացնում ենք, որ

** ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի ներկայացված հայտերը բացվել են 2022թ-ի հունվարի 17-ին ժամը 11:00-ին:*

** Ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել թվով 5 կազմակերպություն, որոնց կողմից 1-ին (Լուսատու ԼԵԴ 50վտ), 2-րդ (Լուսատու ԼԵԴ 100 վտ) և 3-րդ (Լուսատու ԼԵԴ 150 վտ) չափաբաժնի մասով ներկայացվել է թվով 4 տարբեր արտադրողների և թվով 4 տարբեր ապրանքանիշի լուսատուներ, իսկ առաջարկվող բոլոր լուսատուների տեխնիկական բնութագրերը նախնական տվյալներով համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, հետևաբար*

** ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաների տեխնիկական բնութագրերը չեն հակասում գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դրույթներին, նաև հաշվի առնելով հիշյալ թվով 5 կազմակերպության կողմից համեմատական ներկայացված գնային առաջարկները՝ տեխնիկական բնութագրերին համապատասխան:*

9. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի 2-րդ մասի համաձայն, բառացիորեն այն է՝

2. Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, և որ

Բողոքաբերը որևէ ապացույց չի ներկայացրել հիշատակվող պարտադիր դրույթի պահանջի կատարման կամ այն սահմանված կարգով ներկայացված լինելու վերաբերյալ, իսկ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի տրամադրված և հասանելի տեղեկություններում բացակայում է նշված դրույթի շրջանակում պատշաճ ժամկետի վերաբերյալ նշումը, մասնավորապես ժամը, որով պայմանավորված կարելի է եզրակացնել՝ բողոքը 50 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին համապատասխան ներկայացված լինելու կամ չլինելու վերաբերյալ:

Միաժամանակ վերլուծելով և համադրելով Բողոքաբերի փաստարկները, կարելի է եզրակացնել, որ առկա է նաև հիմնավոր կասկած առ այն, որ

«Էլջեն» ՍՊԸ-ի բողոքը միտված է խոչնդոտելու «Երքաղլույս» ՓԲԸ-ի կարիքների համար լուսատեխնիկական ապրանքների ձեռք բերման նպատակով հայտարարված ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի գործընթացը, որի ձգձգման արդյունքում խաթարվելու է նաև «Երքաղլույս» ՓԲԸ-ի կանոնադրական գործառույթների իրականացումը:

Կարևորելով նաև վերաբերելի և/կամ համապատասխան տեղեկատվության բարձրաձայնման և տրամադրման անհրաժեշտությունը՝ «Էլջեն» ՍՊԸ-ն 2021 թ.-ին մասնակցել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի կարիքների համար լուսատեխնիկական ապրանքների ձեռք բերման նպատակով՝ ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով հայտարարված ընթացակարգին, և որ գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ 2-րդ (Լուսատու ԼԵԴ 50վտ) և 3-րդ (Լուսատու ԼԵԴ 100 վտ) չափաբաժնի մասով ճանաչվել/հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն առաջարկվող պայմանագիրը չի կնքել, որի պատճառով ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով ընթացակարգը 2-րդ և 3-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած: Արդյունքում խաթարվել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի բնականոն

գործունեությունը՝ ներազդելով աշխատանքների պատշաճ և ժամանակին իրականացման արդյունավետության վրա:

«Էլջեն» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը չկնքելու հիման վրա, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ԼՕ-2021/72 որոշման հիման վրա, «Էլջեն» ՍՊԸ-ն ընդգրկվել է ՀՀ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ հետագայում՝ «Էլջեն» ՍՊԸ-ի կողմից դատական քննության ժամանակ ներկայացվել է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը, ինչ և Դատարանը բավարարել է, և այդմ իրավունքի ուժով «Էլջեն» ՍՊԸ-ի կողմից ներկայումս ներկայացվել է սույն անհիմն բողոքը, ուստի

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով՝

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանից.

խնդրում ենք բողոքը մերժել՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:»:

Պատվիրատուն 03.02.2022թ.-ին ներկայացրած լրացված բողոքի պատասխանով հայտնել է հետևյալը.

««Էլջեն» ՍՊԸ-ն /այսուհետ Բողոքաբեր/ իր լրացված բողոքում նշել է, որ ուսումնասիրելով «Երքաղլույս» ՓԲԸ-ի ներկայացրած առարկությունները և ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ցանկանում են լրացնել նախապես ներկայացված բողոքը, մասնավորապես.

- Պատվիրատուի գնման հայտում նշված են գնման առարկաների ձեռքբերման առավելագույն գները, մինչդեռ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքի գնումների տեղեկագրում հրապարակված գնումների պլանում այդ գները նշված չեն, և որ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 18 կետի համաձայն, սույն ընթացակարգի մասով, գնումների պլանում նախահաշվային գինը նշելը պարտադիր է, որը և պահպանված չէ գնումների պլանում, ինչն իր հերթին փաստում է, որ հիշյալ Կարգի նորմ/եր/ի խախտմամբ է կազմակերպված խնդրո առարկա ընթացակարգը,

- Բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից՝ գնումների մասին օրենքի 20 հոդվածի 1-2 մասերի համաձայն, հայտերի ներկայացման ժամկետը առնվազն քառասուն օրացուցային օր է, և որ Պատվիրատուն սահմանափակել է մասնակիցներին Օրենքով տրված՝ հայտը 40-րդ օրացուցային ողջ օրվա ընթացքում ներկայացնելու իրավունքը,

- Հրավերին կից պայմանագրի նախագծի 1.5 և 8.1.1 կետերի համաձայն,

1.5 Մատակարարումն իրականացվում է Գնորդի կողմից տրված ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, Գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Առաջին փուլի մատակարարման ժամկետը 60 օրացուցային օր է, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել կարճ ժամկետում: Հաջորդ փուլերում, մատակարարման ժամկետը՝ հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

8.1.1 Պայմանագրով նախատեսված չափաբաժինները և դրանցով սահմանված քանակները և ծավալները Պատվիրատուն կարող է ամբողջությամբ չպատվիրել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և այդ չպատվիրված մասով պայմանագիրը համարվելու է Կողմերի համար լուծված՝ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, բայց ոչ ուշ, քան 2023թ.-ի հունվարի 31-ը, և որ նման դրույթը հակասում է Կարգի 56-րդ կետի 9-րդ ենթակետին, քանի որ կողմի պարտավորության մասնակի չկատարման հետևանքով պայմանագրի նախագիծը համարվելու է լուծված և ի սկզբանե Պատվիրատուն հրավերով սահմանել է Կարգին հակասող դրույթ:

Ամփոփելով վերոգրյալը, Բողոքաբերը և լրացված բողոքում և սկզբնական ներկայացված բողոքում ևս մեկ անգամ փաստել է, որ հիշյալ ընթացակարգի Հրավերով սահմանված պայմանները խտրական են և սահմանափակում ու անհիմն բարդացնում են մասնակցությունը, առհասարակ մասնակիցների, և մասնավորապես Բողոքաբերի հիշյալ ընթացակարգին մասնակցության իրավունքը, և խնդրել են պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ գնման ընթացակարգի 1-3 չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքաբերի պահանջն ամբողջովին անհիմն է՝ և լրացված բողոքում և սկզբնական ներկայացված բողոքում ներկայացված փաստարկների հիմնազուրկ լինելու պատճառաբանությամբ, ուստի ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ՝

1. Լրացված բողոքում Բողոքաբերի այն պնդումը, որ Պատվիրատուի գնման հայտում նշված են գնման առարկաների ձեռքբերման առավելագույն գները, մինչդեռ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքի գնումների տեղեկագրում հրապարակված գնումների պլանում այդ գները նշված չեն, և որ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 18 կետի համաձայն, սույն ընթացակարգի մասով, գնումների

պլանում նախահաշվային գինը նշելը պարտադիր է, որը և պահպանված չէ գնումների պլանում, ինչն իր հերթին փաստում է հիշյալ Կարգի նորմ/եր/ի խախտմամբ կազմակերպված խնդրո առարկա ընթացակարգը, հիմնազուրկ է, ըստ որի

«Երքաղլույս » ՓԲԸ-ի կարիքների համար լուսատեխնիկական ապրանքների ձեռք բերման համար ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին » ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումների համաձայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման առարկա հանդիսացող ապրանքները նախատեսվում է ձեռք բերել և օգտագործել 2022թ-ի ընթացքում, որի համար ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի հայտարարման ժամանակ ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել:

Ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառվել են 2022թ-ի գնումների նախնական պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման: Բողոքաբերի այն պնդումը, թե գնումների պլանում անհրաժեշտ է նշել գնման առարկայի միավորի գին անհիմն է, քանի որ գնումների պլանում ներառված գնման առարկայի ընդհանուր գումարը իրենից ներկայացնում է միավորի գնի և ընդհանուր քանակի արտադրյալը, հետևաբար եթե գնման առարկայի համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն, ապա դա վերաբերում է՝ և միավորի գնին, և ընդհանուր գումարին:

Ընթացակարգի շրջանակներում գնման հայտով ներկայացվել է գնման առարկաների գնման ժամանակացույցը, որտեղ ներառվել են գնման առարկաների առավելագույն քանակները, ինչպես նաև՝ հիմք ընդունելով նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով սահմանված մեկ միավորի գինը:

2. Լրացված բողոքում Բողոքաբերի այն պնդումը, որ Բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից՝ «Գնումների մասին » ՀՀ օրենքի 20 հոդվածի 1-2 մասերի համաձայն, հայտերի ներկայացման ժամկետը առնվազն քառասուն օրացուցային օր է, և որ Պատվիրատուն սահմանափակել է մասնակիցներին Օրենքով տրված՝ հայտը 40-րդ օրացուցային ողջ օրվա ընթացքում ներկայացնելու իրավունքը, հիմնազուրկ է, ըստ որի

ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերը ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում, www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակվել է 2021թ-ի դեկտեմբերի 08-ին, իսկ ընթացակարգի

հայտերի ներկայացման վերջնաժամկետի հաշվարկն իրականացվել է 2021թ-ի դեկտեմբերի 08-ից և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2022թ-ի հունվարի 17-ը, ժամը 11:00-ն՝ պահպանելով գնումների մասին օրենսդրությամբ հայտերի ներկայացման համար սահմանված առնվազն ժամկետը, այն է՝ սկսած և ներառյալ 08.12.2021 թ.-նից մինչև ներառյալ 17.01.2022 թ.-ն ընկած ժամանակահատվածը կազմում է՝ 41 օրացուցային օր, ուստի Բողոքաբերի այն պնդումը, թե Պատվիրատուն սահմանափակել է Մասնակիցների 40 օրացուցային ողջ օրվա ընթացքում ներկայացնելու իրավունքը, չի բխում «Գնումների մասին » ՀՀ օրենքի 20 հոդվածի 1-ին մասի կարգավորումից, այն է՝ Բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից՝ 08.12.2021 թ.-ից, ավելին, եթե այդպիսիք ժամկետը առնվազն 40 օրացուցային օր չբավարարեր և պահպանյվեր, ապա ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում, www.procurement.am հասցեում պարզապես չէր տեղադրվի և պատվիրատուին կտեղեկացնեին ժամկետների մասով Օրենքի պարտադիր կանոնի պահպանման պահանջի ուժով կատարել համապատասխան նշումները՝ առնվազն օրացուցային կոնկրետ օրը՝ 40 օրն ապահովելու համար, որից հետո կհրապարակվեր հայտարարության և հրավերի տեքստերը:

3. Լրացված բողոքում Բողոքաբերի այն պնդումը, որ

Հրավերին կից պայմանագրի նախագծի 1.5 և 8.1.1 կետերի համաձայն,

1.5 Մատակարարումն իրականացվում է Գնորդի կողմից տրված ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, Գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Առաջին փուլի մատակարարման ժամկետը 60 օրացուցային օր է, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել կարճ ժամկետում: Հաջորդ փուլերում, մատակարարման ժամկետը՝ հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

8.1.1 Պայմանագրով նախատեսված չափաբաժինները և դրանցով սահմանված քանակները և ծավալները Պատվիրատուն կարող է ամբողջությամբ չպատվիրել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և այդ չպատվիրված մասով պայմանագիրը համարվելու է Կողմերի համար լուծված՝ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, բայց ոչ ուշ, քան 2023թ.-նի հունվարի 31-ը, և որ նման դրույթը հակասում է Կարգի 56-րդ

կետի 9-րդ ենթակետին, քանի որ կողմի պարտավորության մասնակի չկատարման հետևանքով պայմանագրի նախագիծը համարվելու է լուծված և ի սկզբանե Պատվիրատուն հրավերով սահմանել է Կարգին հակասող դրույթ, հիմնազուրկ է, ըստ որի

- Պայմանագրի նախագծին առնչվող 8.1.1 կետի վերաբերյալ տարածական մեկնաբանության մասին Բողոքաբերի դատողությունները չեն բխում Օրենքի 36 հոդվածի 3-4 կետի կարգավորումներից, այն է՝

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

- Պայմանագրի նախագծի 8.1.1 կետն ընդգրկված է «այլ պայմաններ »-ը գլխում, որը հանդիսանում է լրացուցիչ պայման, ինչպես նաև պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցում առկա է աղյուսակ, ըստ որի նշված է, որ ընդհանուր քանակը նախատեսվում է գնել մինչև և մասնավորապես կոնկրետ թվային արտահայտությունը, այսինքն նշվել է առավելագույն քանակը, և որ հավելված 1-ի վերջնամասում առկա է նաև նշում, այն մասին, որ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև կնքվելու է համաձայնագիր՝ կցելով Հավելված 2-ը, այն է՝ վճարման ժամանակացույցը, իսկ քանակների տարբերության դեպքում նաև տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ անհրաժեշտ քանակներով:

Միաժամանակ վերլուծելով և համադրելով Բողոքաբերի սկզբնական բողոքի և լրացված բողոքի փաստարկները, կարելի է եզրակացնել, որ Բողոքաբերը չի հիմնավորել հիշյալ ընթացակարգի Հրավերով սահմանված որպիսիք պայմանները խտրական են և սահմանափակում ու անհիմն բարդացնում են մասնակցությունը, առհասարակ մասնակիցների, և մասնավորապես Բողոքաբերի հիշյալ ընթացակարգին մասնակցության իրավունքը, և որ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 7-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի կարգավորման իմաստով՝

Բողոքաբերը չի հիմնավորել ինչպես է Պատվիրատուն խախտել ընթացակարգի կազմակերպման միասնական կանոնները, այն է՝ ընթացակարգը կազմակերպել է՝

1/ ոչ մրցակցային, ոչ թափանցիկ, ոչ համաչափ, ոչ հրապարակային, և որ խտրական է՝ չներկայացնելով կոնկրետ ապացուցողական նշանակության փաստեր և/կամ փաստական հանգամանքներ,

2/ չի կատարել կոնկրետ գործողություններ, որոնք ընդլայնում են պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակը, ինչպես և չի ապահովել նրանց միջև մրցակցության խրախուսման պայմանները,

3/ ինչպես է խախտել ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին նրանց մասնակցելու իրավահավասարությունը,

4/ չի արգելել կամ անտեսել է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, և այլն:

Միաժամանակ, ինչպես բողոքի պատասխանում տեղեկացրել էինք, և անհրաժեշտության դեպքում կարող ենք նաև ներկայացնել, սույն ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների և նրանց ներկայացրած տարբեր ապրանքանիշների առաջարկների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները, և այդմ փաստելով, որ ընթացակարգի սահմանված որպիսիք պայմանները խտրական չեն և չեն սահմանափակում ու անհիմն չեն բարդացնում մասնակցությունը, առհասարակ մասնակիցների, և մասնավորապես Բողոքաբերի հիշյալ ընթացակարգին մասնակցության իրավունքը,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով՝

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանից.

խնդրում ենք ամբողջական բողոքը մերժել՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:»:

Պատվիրատուն 11.02.2022թ.-ին ներկայացրած 2-րդ լրացված բողոքի պատասխանով հայտնել է հետևյալը.

««Էլջեն» ՍՊԸ-ն /այսուհետ Բողոքաբեր/ իր 2-րդ լրացված բողոքում նշել է, որ ցանկանում են լրացման նպատակով նախապես ներկայացված բողոքին կրկին լրացնել, մասնավորապես.

- Լուսատուի մոնտաժման հատվածը պետք է լինի կլոր խողովակի տեսքով, պայմանը սահմանափակում է Մրցույթին մասնակցելու նաև Բողոքաբերի հնարավորությունը,

- Իրանը պետք է լինի ալյումինից ձուլված, պայմանը սահմանափակում է Մրցույթին մասնակցելու նաև Բողոքաբերի իրավունքը,

- Լուսատուի սնող լարումը պետք է լինի 220 վ +- 10%, պայմանը սահմանափակում է Մրցույթին մասնակցելու նաև Բողոքաբերի իրավունքը,

Ամփոփելով վերոգրյալը, Բողոքաբերը հանգել է եզրակացության, որ տեխնիկական բնութագրերը սահմանվել են ելնելով Երքաղլույս ՓԲԸ-ի աշխատանքային փորձից և անհրաժեշտությունից, և որ այդ բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի համար կազմակերպվել է սույն գնման ընթացակարգը, և այդմ՝ հիշյալ ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագրերը խտրական են և սահմանափակում են առհասարակ մասնակիցների, և մասնավորապես Բողոքաբերի հիշյալ ընթացակարգին մասնակցության իրավունքը:

Բողոքաբերի պահանջն ամբողջովին անհիմն է և ենթակա մերժման, այդ թվում՝ նաև տեխնիկական հետևյալ պատճառաբանությամբ՝

Երքաղլույս ՓԲԸ-ն, սահմանված տեխնիկական բնութագրերով, ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթը հայտարարել է սեփական կարիքների բավարարման նպատակով լուսատուների ձեռքբերման անհրաժեշտությունից ելնելով, այլ ոչ թե որևէ կոնկրետ ապրանքատեսակ ձեռք բերելու և կոնկրետ մատակարարի շահույթով ապահովելու համար: Ինչպես նաև, գնումների մասին օրենսդրությունում առկա չէ դրույթ, որ Պատվիրատուները պարտավոր են սեփական կարիքների համար իրականացվող գումների ժամանակ ներկայացնել գնման առարկայի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ:

Ձեռք բերվող լուսատեխնիկական ապրանքների տեխնիկական բնութագրերը սահմանվել են ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան՝ սահմանվել են գնման առարկա հանդիսացող լուսատուների նվազագույն չափորոշիչներ այլ ոչ թե սահմանափակումներ:

Բողոքաբերը բազմակի շեշտում է, որ սահմանված որոշ պայմաններ սահմանափակում են հնարավոր մասնակիցների, այդ թվում իրենց Ընկերության մասնակցությունը, այս պնդումը հիմնազուրկ է, քանզի տեխնիկական բնութագրերը սահմանելիս միշտ հնարավոր է, որ որևէ Ընկերության առաջարկվող ապրանքատեսակ, ելնելով նմանատիպ ապրանքների բազմազանությունից, չհամապատասխանի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, բայց այս հանգամանքը չի նշանակում, որ սահմանափակվում է որևէ Ընկերության մասնակցությունը, հետևաբար՝

-Բողոքաբերի այն դիտարկումը, թե <<լուսատուի մոնտաժման հատվածը կլոր խողովակի տեսքով>> բնութագրիչը սահմանափակում է ոչ կլոր մոնտաժման հատված ունեցող լուսատուներով մրցույթին մասնակցելու իրենց և այլ ընկերությունների հնարավորությունը, հավելելով, որ վեց անկյուն մոնտաժման հատված ունեցող իրենց լուսատուներով հնարավոր չէ մասնակցել տվյալ ընթացակարգին, հիմնազուրկ է.

-Բողոքաբերի այն դիտարկումը, որ լուսատուների <<իրանը ձուլված այյումինից>> բնութագրիչը սահմանափակում է ոչ ալյումինից ձուլված իրան ունեցող լուսատուներով մրցույթին մասնակցելու իրենց և այլ ընկերությունների հնարավորությունը, հիմնազուրկ է.

-Բողոքաբերի այն դիտարկումը, որ լուսատուների <<սնող լարումը 220Վ, +-10% >> բնութագրիչը սահմանափակում է մրցույթին մասնակցելու իրենց և այլ ընկերությունների հնարավորությունը, հիմնազուրկ է, քանզի այս պարագայում սահմանվել է նվազագույն չափորոշիչ, ելնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ համակարգում գոյություն ունեցող ստանդարտներից, այն է հոսանքի լարումը 220 վոլտ, հաճախականությունը 50 հերց, որոնք համարվում են հոսանքի որակի չափորոշիչները:

Առաջնորդվելով Բողոքաբերի դիտարկումներով, լուսատուների տեխնիկական բնութագիրը սահմանելիս պետք է նշվեր միայն <<Լուսատու ԼԵԴ>> անվանումը, չնշելով որևէ այլ չոփորոշիչ, ուստի

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով՝

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանից.

խնդրում ենք բողոքը մերժել՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերման նպատակով 02.12.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը
1	31531730	Լուսատու ԼԵԴ 50		Արտաքին տեսքը օվալաձև Հզորությունը 50 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 % սնող լարումը 220Վ, + - 10 % հաճախականությունը 50Հg, + - 5 Հg , արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65, գունային ջերմաստիճանը 4000Կելվին, + - 5 % ոչ պակաս 4500 լյումեն, Էլեկտրական սնուցման բլոկը դրայվերով օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 70 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից մատրիցայի երկարությունը առնվազն 240 մմ, մատրիցայի լայնությունը առնվազն 110մմ, իրանը ձուլված ալյումինից, իրանի առավելագույն երկարությունը 460 մմ, առավելագույն լայնությունը 175մմ մոնտաժային անցքի տրամաչափը 44-50 մմ, մոնտաժման հատվածը կլոր խողովակի տեսքով՝ պատի հաստությունը առնվազն 7մմ , 75-105մմ երկարությամբ, ամրացումը առնվազն երկու հատ հեղյուսների միջոցով: աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում լուսատուի վրա լազերային փորագրումով պետք է գրված լինի Yerqaghluys անվանումը: առնվազն 3 տարի երաշխիքային ժամկետ, չօգտագործված, առնվազն 2021թ-ի արտադրության, ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»
2	31531730	Լուսատու ԼԵԴ 100		Արտաքին տեսքը օվալաձև Հզորությունը 100 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 % սնող լարումը 220Վ, + - 10 % հաճախականությունը 50Հg, + - 5 Հg , արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65, գունային ջերմաստիճանը 4000Կելվին, + - 5 % ոչ պակաս 8300 լյումեն, Էլեկտրական սնուցման բլոկը դրայվերով

				օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 120 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից մատրիցայի երկարությունը առնվազն 280մմ, մատրիցայի լայնությունը առնվազն 130մմ, իրանը ձուլված ալյումինից, իրանի առավելագույն երկարությունը 510 մմ, առավելագույն լայնությունը 210մմ մոնտաժային անցքի տրամաչափը 52-56 մմ, մոնտաժման հատվածը խողովակի տեսքով՝ պատի հաստությունը առնվազն 3մմ, 75-105մմ երկարությամբ, ամրացումը առնվազն երկու հատ հեղյուսների միջոցով: աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում լուսատուի վրա լազերային փորագրումով պետք է գրված լինի Yerqaghluys անվանումը: առնվազն 3 տարի երաշխիքային ժամկետ, չօգտագործված, առնվազն 2021թ-ի արտադրության, ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»
3	31531730	Լուսատու ԼԵԴ 150		Հզորությունը 150 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 % սնող լարումը 220Վ, + - 10 % հաճախականությունը 50Հg, + - 5 Հg , արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65, գունային ջերմաստիճանը 4000Կելվին, + - 5 % ոչ պակաս 12300 լյումեն, Էլեկտրական սնուցման բլոկը դրայվերով օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 180հատ լուսադիոդներից և ոսպնյակներից մատրիցայի երկարությունը առնվազն 320մմ, մատրիցայի լայնությունը առնվազն 150մմ, իրանը ձուլված ալյումինից, իրանի առավելագույն երկարությունը 610 մմ, առավելագույն լայնությունը 230մմ մոնտաժային անցքի տրամաչափը 62-64 մմ, մոնտաժման հատվածը խողովակի տեսքով՝ պատի հաստությունը առնվազն 3մմ, 75-105մմ երկարությամբ, ամրացումը առնվազն երկու հատ հեղյուսների միջոցով: աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում լուսատուի վրա լազերային փորագրումով պետք է գրված լինի Yerqaghluys անվանումը: առնվազն 3 տարի երաշխիքային ժամկետ, չօգտագործված, առնվազն 2021թ-ի արտադրության, ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Էլջեն» ՍՊԸ-ի կողմից 17.01.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև

մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերման նպատակով 02.12.2021թ.-ին հայտարարված «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը
1	31531730	Լուսատու ԼԵԴ 50		Արտաքին տեսքը օվալաձև Հզորությունը 50 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 % սնող լարումը 220Վ, + - 10 % հաճախականությունը 50Հg, + - 5 Հg , արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65, գունային ջերմաստիճանը 4000Կելվին, + - 5 % ոչ պակաս 4500 լյումեն, Էլեկտրական սնուցման բլոկը դրայվերով օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 70 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից մատրիցայի երկարությունը առնվազն 240 մմ, մատրիցայի լայնությունը առնվազն 110մմ, իրանը ձուլված ալյումինից, իրանի առավելագույն երկարությունը 460 մմ, առավելագույն լայնությունը 175մմ մոնտաժային անցքի տրամաչափը 44-50 մմ, մոնտաժման հատվածը կլոր խողովակի տեսքով՝ պատի հաստությունը առնվազն 7մմ , 75-105մմ երկարությամբ, ամրացումը առնվազն երկու հատ հեղյուսների միջոցով: աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում լուսատուի վրա լազերային փորագրումով պետք է գրված լինի Yerqaghluys անվանումը:

				առնվազն 3 տարի երաշխիքային ժամկետ, չօգտագործված, առնվազն 2021թ-ի արտադրության, ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»
2	31531730	Լուսատու ԼԵԴ 100		Արտաքին տեսքը օվալաձև Հզորությունը 100 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 % սնող լարումը 220Վ, + - 10 % հաճախականությունը 50Հg, + - 5 Հg , արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65, գունային ջերմաստիճանը 4000Կելվին, + - 5 % ոչ պակաս 8300 լյումեն, Էլեկտրական սնուցման բլոկը դրայվերով օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 120 հատ լուսադիոդներից և ոսպնյակներից մատրիցայի երկարությունը առնվազն 280մմ, մատրիցայի լայնությունը առնվազն 130մմ, իրանը ձուլված ալյումինից, իրանի առավելագույն երկարությունը 510 մմ, առավելագույն լայնությունը 210մմ մոնտաժային անցքի տրամաչափը 52-56 մմ, մոնտաժման հատվածը խողովակի տեսքով՝ պատի հաստությունը առնվազն 3մմ, 75-105մմ երկարությամբ, ամրացումը առնվազն երկու հատ հեղյուսների միջոցով: աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում լուսատուի վրա լազերային փորագրումով պետք է գրված լինի Yerqaghluys անվանումը: առնվազն 3 տարի երաշխիքային ժամկետ, չօգտագործված, առնվազն 2021թ-ի արտադրության, ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»
3	31531730	Լուսատու ԼԵԴ 150		Հզորությունը 150 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 % սնող լարումը 220Վ, + - 10 % հաճախականությունը 50Հg, + - 5 Հg , արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65, գունային ջերմաստիճանը 4000Կելվին, + - 5 % ոչ պակաս 12300 լյումեն, Էլեկտրական սնուցման բլոկը դրայվերով օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 180հատ լուսադիոդներից և ոսպնյակներից մատրիցայի երկարությունը առնվազն 320մմ, մատրիցայի լայնությունը առնվազն 150մմ, իրանը ձուլված ալյումինից, իրանի առավելագույն երկարությունը 610 մմ, առավելագույն լայնությունը 230մմ մոնտաժային անցքի տրամաչափը 62-64 մմ, մոնտաժման հատվածը խողովակի տեսքով՝ պատի հաստությունը առնվազն 3մմ, 75-105մմ երկարությամբ, ամրացումը առնվազն երկու հատ հեղյուսների միջոցով: աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում լուսատուի վրա լազերային փորագրումով պետք է գրված լինի Yerqaghluys անվանումը: առնվազն 3 տարի երաշխիքային ժամկետ, չօգտագործված, առնվազն 2021թ-ի արտադրության, ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝

երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման/հերքման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի դիրքորոշումների և Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 չափաբաժնի մասով սահմանված Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ուստի ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են համապատասխանեցման նշված դրույթների պահանջներին:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և չեն բավարարում մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլջեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթը պետք է հայտարարել չկայացած՝ սույն որոշմամբ արված վերլուծությունների ու դատողությունների հիման վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլջեն» ՍՊԸ-ի կողմից 17.01.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/05 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**